ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

գ.Իջևան «19» 02 2021թ.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղը (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) ի դեմս տնօրենի պաշտոնակատար Ա. Հ. Մակարյանի որը գործում է կանոնադրության հիման վրա, և Ազատամուտի համայնքը ի դեմս համայնքի ղեկավարի պաշտոնակատար **Ա. Ս. Բեգինյանի**, որը գործում է ՀՀ օրենսդրության հիման վրա (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Հուշագրի առարկան Կողմերի համագործակցության նպատակի, գործընկերության հիմնական ուղղությունների սահմանումն է:

1.2. Կողմերը, համապատասխանաբար կնքելով սույն համագործակցության հուշագիրը, ամրագրում են սահմանված նպատակի հասնելուն ուղղված իրենց պատրաստակամությունը: Սույն հուշագիրը միջոցների հատկացման պարտավորագիր չէ: Այն ցանկացած Կողմի համար օրենքով պարտադրվող պարտավորություն չի համարվում, կամ իրավունքներ չի տրամադրում որևէ այլ Կողմի համար:

2.ՀՈՒՇԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Հուշագրի նպատակը Կողմերի միջև գործընկերային հարաբերությունների հաստատումն է, Հուշագրի 2.2. կետում նախատեսված ուղղություններով:

2.2. Կողմերի համագործակցության հիմնական ուղղություններն են.

2.2.1. ԵՊՀ ԻՄ պրոֆեսորադասախոսական կազմի և մասնագետների կողմից համայնքների դպրոցներում դասընթացների իրականացում,

2.2.2. արդի թեմաների շուրջ կլոր սեղանների, հանդիպումների և տարբեր տեսակի միջոցառումների կազմակերպում,

2.2.3. Դպրոցականների շրջանում ամենախելացի ինտելեկտուալ խաղի կազմակերպում (ԵՊՀ ԻՄ-ի ՈՒԽ ներգրավածությամբ),

2.2.4. Հայրենասիրական բնույթի միջոցառումների կազմակերպում (ԵՊՀ ԻՄ-ի դասախոսական կազմի աջակցությամբ և ՈՒԽ ներգրավածությամբ,

2.2.5. երկուստեք երիտասարդ կամավորական ներուժի օգտագործում,

3. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

3.1. Կողմերը պարտավոր են առաջնորդվել համագործակցության հետևյալ հիմնական սկզբունքներով.

- փոխադարձ վստահություն,
- պատասխանատվություն,
- պարտաճանաչություն,
- որակի վերահսկում
- փոխըմբռնում և փոխզիջում,

- թափանցիկություն,
- համագործակցություն:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է անժամկետ:

4.2. Սույն Հուշագրի ցանկացած փոփոխություն կատարվում է գրավոր և դառնում նրա անբաժանելի մասը:

4.3. Հուշագիրը կարող է դադարեցվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ, մյուս Կողմին առնվազն 30 օր առաջ գրավոր տեղեկացնելու պայմանով:

4.4. Սույն Հուշագրի վերաբերյալ Կողմերի միջև ծագած անհամաձայնություններն ու վեճերը լուծվում են Կողմերի բանակցությունների միջոցով:

4.5. Սույն Հուշագիրը կնքվում է երկու բնօրինակից, հայերեն լեզվով, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղ Հասցե՝ Տավուշի մարզ, ք. Իջևան Ռ.Իսանողական 3 Տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Հ. Մակարյան Կ.Տ.	Տավուշի մարզի Ազատամուտ համայնք Հասցե՝ 1-ին փ 10/1 Համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Ա. Ս. Բեգինյան Կ.Տ.